ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2
ՀՏՋՀ-ՄԲՄ-ԱՇՁԲ-2025/4 ծածկագրով
գնման ընթացակարգի հայտերի բացման նիստի

ք. Երևան 20.02.2025թ.
ժամը՝ 11:00

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան Կ. Ուլնեցի 31 հասցե, ՀՎՀՀ 0084644, էլեկտրոնային փոստ՝ atdf@atdf.am) գործադիր տնօրենի **«29» հունվարի 2025թ. թիվ 163-Ա** հրամանով ստեղծված գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **ՀՀ «Կոտայքի մարզի Զառ բնակավայրի մանկապարտեզի կառուցման» աշխատանքների** ձեռքբերման նպատակով **ՀՏՋՀ-ՄԲՄ-ԱՇՁԲ-2025/4** ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստին (այսուհետ՝ նիստ) մասնակցում է հետևյալ կազմով՝

Սպարտակ Պետրոսյան՝ Հանձնաժողովի նախագահ
Կարեն Միքայելյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Արաքսյա Իսախանյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Էվելինա Գրիգորյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Վարդինե Իսահակյան՝ Հանձնաժողովի բացող անդամ
Սոնա Կարապետյան՝ Հանձնաժողովի բացող անդամ

1. Տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

1.1 Հայտերը բացվել են **2025 թվականի փետրվարի 20-ին, ժամը 11:00-ին** էլեկտրոնային գնումների *Armeps (www.armeps.am)* համակարգի միջոցով, ք.Երևան, Կ.Ուլնեցի 31 , 2-րդ հարկ, 206 սենյակ հասցեում:

2. *Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները*

2.1 Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

ՀՀ	Մասնակիցների անվանումները	Հասցե, էլեկտրոնային փոստ,	հեռախոս
1	«Ռոուդկոնստրակտ» ՍՊԸ, «Էկրա Կովկաս» ՍՊԸ, «ԿԱ ԷՌ Քնսթրաքշն» ՍՊԸ, «Գայսաթ» ՍՊԸ ՀԳ	ք. Արտաշատ,Մարքսի 83., zet-profil@mail.ru, ք. Արարատ, Խանջյան 12, araratshin@inbox.ru	094423545, 093805595
2	«Պրոմ Գրուպ» ՍՊԸ	Արարատի մարզ, գ. Ոստան, Երկաթուղային 14, s.arist@mail.ru, Արարատի մարզ, գ. Շահումյան, Արցախի 5, artplas@inbox.ru	077922522, 098000204, 093000204
3	«Ջի Թի Էս Քնսթրաքշն» ՍՊԸ	ք. Երևան, Սասունցի Դավիթ 87ա, bedeck.llc@mail.ru, info@bedeck.am	011575522,099100074
4	«Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ, «Արարատշին» ՍՊԸ կոնսորցիում	Ք. Երևան, Գրիգոր Զոհրապ 124/1, t.harutyunyan@promgroup.am,	098365575
5	«Ֆ Տ Դ-Շին» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ, 13փ. թիվ 9/1, altechwin@gmail.com, ք. Երևան, Քաջազնունի 1, info@inmarket.am, ք. Երևան, Շիրակի 82, lusiareg40@mail.ru	041553061, 094202560,093251101, 098404128

6	«Արտաշատի ԷՑԾ» ՍՊԸ և «Արտ Պլաս» ՍՊԸ ՀՁ	roadconstructllc@gmail.com, Կոտայքի մարզ, գ. Ձորաղբյուր, Ամառանոցային 34, info@ekra.am, ՀՀ 2224 Կոտայքի մարզ, գ. Ձորաղբյուր, Ամառանոցային 34, krconstuction@yandex.ru, ք. Երևան,Կոմիտասի պող. 1 182, ք. Երևան, Սաֆարյան 183, gaysat@mail.ru	060500779, 098650098
7	«ՇԻՆ» ՍՊԸ և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ ՀԳ	Ք. Երևան, Շիրակի 96, gtsconstruction2020@gmail.com,	099630935
8	«Ալտեք» ՍՊԸ, «Ինմարկետ» ՍՊԸ և «Լուսի-Արեգ» ՍՊԸ կոնսորցիում	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Լանջաղբյուր, Զ. Անդրանիկի խճ., 2-նրբ 10	077770906
9	«Հայկ և Նորիկ» ՍՊԸ, «Պեռֆեկտ Շին» ՍՊԸ, «Գայսաթ» ՍՊԸ և «Էլիտ Քնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիում	ք. Երևան, Եկմալյան փ., շ., 6/55, aramarami2020@mail.ru, ք. Երևան, Տիգրան Մեծ 63, gevorgyan.nersisyan@mail.ru,	055900050
10	«Բիդեք» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, հ. Մարտունի գ. Երանոս, 12—րդ փ., տուն 22, edgar.shahinyan81@mail.ru, ՀՀ Գեղարքունիքի մարզ, Ծաղկունք, 2փ., տ33,karen6197@mail.ru, ՀՀ Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, Սաֆարյան 183., gaysat@mail.ru, Ք. Երևան, Կենտրոն, Վերին Անտառային փ., շ,131,բն.1/2, elite.co44@gmail.com	077877145,094553583, 091276060, 099622083

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին

3.1 Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակիցների կողմից հայտերը (ծրարը) կազմվել և ներկայացվել են էլեկտրոնային տարբերակով՝ Armeps (www.armeps.am) էլեկտրոնային համակարգով, և հրավերով սահմանված կարգով:

4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին, տվյալներ՝ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների, գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորման, տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

4.1 Հանձնաժողովը փաստում է, որ հայտերը՝ կից փաստաթղթերով, ներկայացվել են էլեկտրոնային տարբերակով՝ Armeps համակարգով և ենթակա են հետագա գնահատման:

5. Տեղեկություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին՝ տառերով և թվերով արտահայտված

5.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները:

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնման Առարկան	Նախահաշվային պլանավորված Գինը	Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Հայտի ապահովման առկայությունը (առկա է/

							առկա չէ)
1	«ՀՀ Կոտայքի մարզի Զառ բնակավայրի մանկապարտեզ ի կառուցման» աշխատանքներ	309 206 773	«Ռոուդկոնստրակտ» ՍՊԸ, «Էկրա Կովկաս» ՍՊԸ, «ԿԱ ԷՌ Քնսթրաքշն» ՍՊԸ, «Գայսաթ» ՍՊԸ ՀԳ	226 750 000 Երկու հարյուր քսանվեց միլիոն յոթ հարյուր հիսուն հազար	45 350 000 Քառասունհին գ միլիոն երեք հարյուր հիսուն հազար	272 100 000 Երկու հարյուր յոթանասուներկու միլիոն հարյուր հազար	առկա է
			«Պրոմ Գրուպ» ՍՊԸ	234 463 100 Երկու հարյուր երեսունչորս միլիոն չորս հարյուր վաթսուներեք հազար մեկ հարյուր	46 892 620 Քառասունվեց միլիոն ութ հարյուր ինսուներկու հազար վեց հարյուր քսան	281 355 720 Երկու հարյուր ութսունմեկ միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար յոթ հարյուր քսան	առկա է
			«Ջի Թի Էս Քնսթրաքշն» ՍՊԸ	239 194 600 Երկու հարյուր երեսունինը միլիոն հարյուր իննսունչորս հազար վեց հարյուր	47 838 920 Քառասունյոթ միլիոն ութ հարյուր երեսունութ հազար ինը հարյուր քսան	287 033 520 Երկու հարյուր ութսունյոթ միլիոն երեսուներեք հազար հինգ հարյուր քսան	առկա է
			«Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ, «Արարատշին» ՍՊԸ կոնսորցիում	240 000 000 Երկու հարյուր քառասուն միլիոն	48 000 000 Քառասունութ միլիոն	288 000 000 Երկու հարյուր ութսունութ միլիոն	առկա է
			«Ֆ Տ Դ-Շին» ՍՊԸ	240 750 000 Երկու հարյուր քառասուն միլիոն յոթ հարյուր հիսուն հազար	48 150 000 Քառասունութ միլիոն մեկ հարյուր հիսուն հազար	288 900 000 Երկու հարյուր ութսունութ միլիոն ինը հարյուր հազար	առկա է
			«Արտաշատի ԷՑԾ» ՍՊԸ և «Արտ Պլաս» ՍՊԸ ՀՁ	241 250 000 Երկու հարյուր քառասունմեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար	48 250 000 Քառասունութ միլիոն երկու հարյուր հիսուն հազար	289 500 000 Երկու հարյուր ութսունինը միլիոն հինգ հարյուր հազար	առկա
			«Շին» ՍՊԸ և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ ՀԳ	248 653 780 Երկու հարյուր քառասունութ միլիոն վեց հարյուր հիսուներեք հազար յոթ հարյուր ութսուն	49 730 756 Քառասունինը միլիոն յոթ հարյուր երեսուն հազար յոթ հարյուր հիսունվեց	298 384 536 Երկու հարյուր իննսունութ միլիոն երեք հարյուր ութսունչորս հազար հինգ հարյուր երեսունվեց	առկա
			«Ալտեք» ՍՊԸ, «Ինմարկետ» ՍՊԸ և «Լուսի-Արեգ» ՍՊԸ կոնսորցիում	248 750 000 Երկու հարյուր քառասունութ միլիոն յոթ հարյոր հիսուն հազար	49 750 000 Քառասունինը միլիոն յոթ հարյուր հիսուն հազար	298 500 000 Երկու հարյուր իննսունութ միլիոն հինգ հարյուր հազար	առկա
			«Հայկ և Նորիկ» ՍՊԸ, «Պեռֆեկտ Շին» ՍՊԸ, «Գայսաթ» ՍՊԸ և «Էլիտ Քնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիում	249 999 995 Երկու հարյուր քառասունինը միլիոն ինը հարյուր իննսունինը հազար ինը հարյուր	49 999 999 Քառասունինը միլիոն ինը հարյուր իննսունինը հազար ինը	299 999 994 Երկու հարյուր իննսունինը միլիոն ինը հարյուր իննսունինը հազար ինր հարյուր	առկա

				իննսունհինգ	**հարյուր իննսունինը**	**իննսունչորս**	
			«Բիդեք» ՍՊԸ	**278 286 091 Երկու հարյուր յոթանասունութ միլիոն երկու հարյուր ութսունվեց հազար իննսումեկ**	**55 657 218 Հիսունհինգ միլիոն վեց հարյուր հիսունյոթ հազար երկու հարյուր տասնութ**	**333 943 309 Երեք հարյուր երեսուներեք միլիոն ինը հարյուր քառասուներեք հազար երեք հարյուր ինը**	***առկա***

5.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը / հայտերով ներկայացրած գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

6.Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովն արձանագրեց, որ՝

6.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ապահովումները համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ՝ **«Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ, «Արարատշին» ՍՊԸ կոնսորցիումի, «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ և «Արտ Պլաս» ՍՊԸ ՀՁ-ի, «ՇԻՆ» ՍՊԸ և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ ՀԳ-ի որոնց** կողմից ներկայացված հայտերում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջներին, մասնավորապես՝ մասնակիցների կողմից ներկայացվել են հայտի ապահովումներ՝ բանկային երաշխիքի տեսքով, որոնք չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին. պահպանված չեն պահանջվող վավերապայմանները, հրավերի Հավելված 3-ով սահմանված է բանկային երաշխիքի օրինակելի ձևը, որի լրացման ենթակա բաց թողնված դաշտերում առկա է հետևյալ նշումը «(կոնսորցիումի դեպքում՝ (կոնսորցիումի անվանումը))», այսինքն՝ երաշխիքի 1-ին կետում պետք է լրացվեր կոնսորցիումի անվանումը, մինչդեռ, Մասնակիցները, մրցութային ընթացակարգին հանդես գալով կոնսորցիումով, համապատասխան դաշտում չեն նշել կոնսորցիումի անվանումը, այլ նշել են կոնսորցիումի անդամ միայն մեկ կազմակերպության անվանումը, ընդ որում, այս տեսքով բանկային երաշխիքից բխում է, որ այն չի հանդիսանում հրավերով սահմանված կոնսորցիումի պարտավորությունների կատարման ապահովում, այլ՝ այն համարվում է կոնսորցիումի անդամ միայն մեկ կազմակերպության հրավերով սահմանված պարտավորությունների կատարման ապահովում: Այսպիսով, նման պայմաններում հանձնաժողովը եզրահանգում է, որ հայտը պետք է գնահատել անբավարար և մերժել:

6.2 **«Ռոուդկոնստրակտ» ՍՊԸ, «Էկրա Կովկաս» ՍՊԸ, «ԿԱ ԷՌ Քնսթրաքշն» ՍՊԸ, «Գայսաթ» ՍՊԸ ՀԳ-ի** կողմից ներկայացված հայտում առկա համատեղ գործունեության պայմանագրի կողմ հանդիսացող «Գայսաթ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել նաև **«Հայկ և Նորիկ» ՍՊԸ, «Պեռֆեկտ Շին» ՍՊԸ և «Էլիտ Քնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիումի** հետ համատեղ:

7. Հանձնաժողովը որոշեց.

7.1 **«Ռոուդկոնստրակտ» ՍՊԸ, «Էկրա Կովկաս» ՍՊԸ, «ԿԱ ԷՌ Քնսթրաքշն» ՍՊԸ, «Գայսաթ» ՍՊԸ ՀԳ**-ի և **«Հայկ և Նորիկ» ՍՊԸ, «Պեռֆեկտ Շին» ՍՊԸ, «Գայսաթ» ՍՊԸ և «Էլիտ Քնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիումի** կողմից ներկայացված հայտերը գնահատել անբավարար և մերժել՝ ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետի, ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 7-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն, **«Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ և «Արտ Պլաս» ՍՊԸ ՀՁ-ի, «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ, «Արարատշին» ՍՊԸ կոնսորցիումի, «ՇԻՆ» ՍՊԸ և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ**

ՀԳ-ի կողմից ներկայացված հայտերն գնահատել անբավարար և մերժել՝ ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն:

7.2 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023թ. հոկտեմբերի 26-ի N 1869-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 67-րդ կետի պահանջներով, անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ և դիմել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե՝ ստանալու իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը ռեզիդենտ՝ **«Պրոմ Գրուպ» ՍՊԸ-ի, «Ջի Թի Էս Քնսթրաքշն» ՍՊԸ-ի, «Ֆ Տ Դ-Շին» ՍՊԸ-ի, «Ալտեք» ՍՊԸ, «Ինմարկետ» ՍՊԸ և «Լուսի-Արեգ» ՍՊԸ կոնսորցիումի, «Բիդեք» ՍՊԸ-ի՝՝** նախորդ հինգ տարիների (2020-2024թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ:

7.3 Համաձայն մրցույթի պահանջների՝ **«Պրոմ Գրուպ» ՍՊԸ-ի, «Ջի Թի Էս Քնսթրաքշն» ՍՊԸ-ի, «Ֆ Տ Դ-Շին» ՍՊԸ-ի, «Ալտեք» ՍՊԸ, «Ինմարկետ» ՍՊԸ և «Լուսի-Արեգ» ՍՊԸ կոնսորցիումի, «Բիդեք» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտերը ներառել են նաև հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի ձևով, ուստի Հանձնաժողովը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 67-րդ կետի պահանջներով, որոշեց ձեռնարկել համապատասխան միջոցներև դիմել երաշխավոր բանկերին ստուգելու ներկայացված հայտի ապահովման իսկությունը:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

8.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը կայանալու է 7-րդ բաժնի 7.1-րդ կետում նշված փաստաթղթերը Հանձնաժողովին հանձնելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 15:00-ին:

Հանձնաժողովի նախագահ՝

Սպարտակ Պետրոսյան _____

անդամներ՝

Կարեն Միքայելյան _____

Արաքսյա Իսախանյան _____

Անահիտ Թադևոսյան _____

Էվելինա Գրիգորյան _____

Վարդինե Իսահակյան _____

Սոնա Կարապետյան _____

քարտուղար՝

Ալիսա Նիկոլայան _____